600.0539.16.11.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2011 թվականի №539Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի №41Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի «Այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №41Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «Այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկայում» (այսուհետ՝Մեթոդիկա), կատարել հետևյալ փոփոխությունները.

   1)Մեթոդիկայի 1.1 կետի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

   «Մատակարարի կողմից սպառողին փոխհատուցում չի տրվում և սույն մեթոդիկայի 2.1 կետի համաձայն հաշվարկվող C գումարն ընդունվում է հավասար զրոյի, եթե մատակարարը նախորդ ամսվա ընթացքում դիմել է սպառողին՝ ենթասպառողի էլեկտրամատակարարման դադարեցման համար:».

   2) Մեթոդիկայի 2.2 կետում «4800» թիվը փոխարինել «6547», «260» թիվը փոխարինել «355», «0,482» թիվը փոխարինել «0,657», «0,863» թիվը փոխարինել «1,177», «0,97» թիվը փոխարինել «1,323», «0,465» թիվը փոխարինել «0,634» և «0,825» թիվը փոխարինել «1,125» թվերով.

3) Մեթոդիկայի 2.3 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2.3 Սպառողի կողմից այլ սպառողների էլեկտրամատակարարման նպատակով մեկից ավելի ենթակայաններ կամ էլեկտրահաղորդման գծեր օգտագործվելու դեպքում սույն մեթոդիկայի 2.2 կետով նախատեսված A մեծությունը յուրաքանչյուր ենթակայանի կամ էլեկտրահաղորդման գծի համար հաշվարկվում է առանձին, որը սույն կետի №1 աղյուսակում ամրագրված սահմանային արժեքները գերազանցելու դեպքում ընդունվում է հավասար N1 աղյուսակում ամրագրված արժեքներին.

№1 աղյուսակ

դրամ/ ամիս, (առանց ավելացված արժեքի հարկի)

Սպառողի սպառման համակարգի լարումը	Սպառողի ենթակայանի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծություն	Սպառողի էլեկտրահաղորդման գծերի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծություն
6(10) կՎ	73 656	13 640
35 կՎ	294 624	23 188
110 կՎ	589 248	24 552

»:

4) Մեթոդիկայի 2.4 կետում «որոնք ընդունվում են հավասար 2-ի՝ անկախ սպառողի սնման լարման մակարդակից» բառերը փոխարինել «որոնք ընդունվում են հավասար 1-ի, երբ ենթասպառողը սնվում է 6(10) կՎ և բարձր լարման ցանցերից և 3-ի, երբ ենթասպառողը սնվում է 0,4 կՎ և ցածր լարման ցանցերից» բառերով:

5) ուժը կորցրած ճանաչել Մեթոդիկայի 2.5 կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 նոյեմբերի 2011թ.